

## Կարծիք

Գարիկ Գագիկի Հովակիմյանի «Պատերազմի մասնակից զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական դրսևորումները հետպատերազմյան շրջանում» վերտառությամբ ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի վերաբերյալ

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող ռազմական հակամարտությունները, որոնք ուղեկցվում են ինտեսիվ տեղեկատվական պատերազմներով, լուրջ սպառնալիք են ստեղծում բնակչության էթնիկական ինքնագիտակցության վրա ազդեցություն ունենալու առումով: Դրանք ավելի ցայտունորեն են արտահայտված պատերազմին մասնակցած նախկին զինծառայողների շրջանում. որոնք պատերազմում ստացած հոգեկան տրավմատիկ ապրումների հետևանքով փոփոխում են, ոչ միայն կյանքի իմաստի վերաբերյալ իրենց նախկին պատկերացումները, այլև էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական բնութագրերը: Իրավացի է հեղինակը, երբ նշում է, որ հետպատերազմյան հասարակություններում հաճախ առաջանում են սոցիալական և հոգեբանական վերաձևավորումների գործընթացներ, որոնք ներառում են նույնականության վերագնահատում, ազգային ինքնության վերաիմաստավորում և սոցիալական դերերի փոփոխություն: Համաձայն ենք նաև այն ձևակերպման հետ, որ պատերազմից վերադարձած որոշ զինծառայողներ հետտրավմատիկ ստրեսային խանգարումների հետևանքով երեմն ունենում են էթնիկական ինքնության ընկալումների փոփոխություններ՝ որպես հոգեբանական պաշտպանական կիրառվող մեխանիզմ:

Ատենախոսության «Անձի ինքնագիտակցության հիմնախնդիրը հոգեբանության մեջ» բաժնում վերլուծվում են այդ ոլորտում հայտնի առաջատար մասնագետների աշխատությունները, մասնավորապես՝ Է. Էրիկսոնի (էթնիկական ինքնության ձևավորման հոգեբանական մոդել), Թեջֆելի և Թերների (սոցիալական նույնականության տեսություն), Զ. Բերիի (էթնիկական ինքնության ադապտացիայի տեսություն), Վ. Ֆրանկլիի (տրավմայի վերապրման էքզիստենցիալ մոտեցում), Ա.



Վիսերմանի (պատերազմի ազդեցությունը սոցիալական հարաբերությունների վրա), իսկ հայրենական հետազոտողներից Ն. Ռ. Հակոբյանի, Մ. Պ. Մկրտումյանի, Կոբեկյանի, Ա. Նալչաջյանի և այլ գիտնականների աշխատությունները բացահայտելով ատենախոսության մեջ կատարված հետազոտության տեսական հիմքը:

Ատենախոսության մեջ վերլուծվում են այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսին, օրինակ զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության առանձնահատկությունները և դրանց վրա ազդող գործոնները: Անշուշտ պատերազմին մասնակցությունն ու ծանր փորձառությունները կարող են մի դեպքում նպաստել զինծառայողների էթնիկական ինքնության ամրապնդմանը: Մեկ այլ դեպքում, ընդհակառակը, պատերազմից հետո էթնիկական ինքնությունը կարող է խաթարվել: Պատճառը սոցիալական ցնցումներն են, կորուստները, հոգեկան տրավմաները և հասարակության մեջ մարգինալացման գործընթացները (այդ մասին են վկայում նաև Ա. Բանդուրան, Ա. Անտոնովսկն, Ջ. Բերրին և այլք): Հաշվի առնելով հայադրբեջանական ռազմական կոնֆլիկտը և հասարակության վրա դրանց ազդեցությունը նման հետազոտությունները շատ կարևոր են:

Ատենախոսը նպատակ է ունենեցել ուսումնասիրել պատերազմի մասնակից զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական դրսևորումները հետպատերազմյան շրջանում, ինչպես նաև բացահայտել դրա ազդեցությունը վարքային մոդելների, սոցիալական ինտեգրման ու արժեքային կողմնորոշումների և դրանց փոփոխությունների վրա:

Այդ փոփոխությունների բացահայտման համար ատենախոսը կիրառել է ճշգրիտ հետազոտության մեթոդաբանություն և հոգեբանական մեթոդներ ու մեթոդիկաներ: Կարծում ենք հիշատակման արժանի է նաև փուլային ընթացակարգով հետազոտությունների անցկացման և արդյունքների որակական, քանակական վերլուծությունը և համահարաբերակցական կապերի բացահայտումը, որոնք հնարավորությունն է տալիս այդ ոլորտի մասնագետներին մշակելու ծրագրեր



հետպատերազմյան միջավայրում էթնիկական խմբերի միջև խաղաղ գոյակցության քաղաքականության վրաբերյալ:

Հետազոտական արդյունքների հաշվառմամբ նա ներկայացնում է բավական արժեքավոր գործնական առաջարկություններ, որոնք կարևոր են պատերազմով անցած մեր հասարակության համար՝ դրանց սոցիալ-հոգեբանական հետևանքների արդյունավետ հաղթահարման ուղիների բաղահայտման առումով:

Ըստ ատենախոսի՝ էթնիկական նույնականության տեսակների ու հանդուրժողականության ինտեգրալ, և նրա տեսակների համարաբերակցային վերլուծությունը ցույց են տալիս, որ մարտական գործողությունների փորձ ունեցողների շրջանում էթնոնիհիլիզմն ու անտարբերությունը որոշ դեպքերում նպաստում են հանդուրժողականության դրսևորումներին և արտահայտված են նրանց ավելի բաց ու չեզոք մոտեցումներում: Բավական հետաքրքիր է նաև հետևյալ եզրակացությունը այն մասին, որ էթնոէգոիզմը, էթնոմեկուսացումը և էթնոֆանատիզմը խիստ բացասաբար են ազդում հանդուրժողականության վրա՝ մեծացնելով սոցիալական կոնֆլիկտների և խտրականության ռիսկը: Էթնիկական նույնականության նորմալ մակարդակը, հիմնականում՝ հանդուրժողականությանը, բայց սոցիալական միջավայրում կարող է լինել որոշակի սահմանափակում:

Աշխատանքում կարծում ենք առկա են որոշակի բացթողումներ, որոնց հաշվառումը կարևոր նշանակություն ունի հետագա ուսումնանիրությունների համար, օրինակ՝

1. Առկա են ձևակերպումներ, որոնք ընդհանրական են և ունեն գիտական ու լեզվական խմբագրման կարիք: Օրինակ՝ 2.3 ենթաբաժնում գրված է, որ «Կարևոր է նշել, որ վերը նշված առանձնահատկություններն ունեն նաև անհատական դրսևորում ու կարող են տարբերվել կախված դրսևորման համատեքստից և յուրաքանչյուր զինծառայողի փորձից, և զինվորական ծառայությունը և հետպատերազմյան ժամանակաշրջանը կարող են տարբերվել՝ կոնկրետ կոնֆլիկտից կամ իրադրությունից կախված»:



Կարծում ենք նման ձևակերպումը որպես ենթագլխի ամփոփում բավարար չէ:

2. «Զինձառայողների սոցիալ-հոգեբանական բնութագիրը» 2.1 ենթաբաժնում հեղինակը չի անդրադարձել հայրենական ոազմական հոգեբանության ոլորտում տպագրված գիտական հոդվածների, մենագրությունների վերլուծությանը, այլ բավարարվել է միայն հայրենական մեկ հետազոտության վերլուծությամբ, որը կատարվել է 2000-ականների սկզբին:

3. Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը հաշվի առներ հետազոտության մեջ ներգրավված հայերի, ասորիների և եզդիների էթնոմշակութային առանձնահատկությունները, որոնք արտահայտված են մշակութային ստեղծագործություններում և որոնք ազդեցությունն են ունենում նրանց ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական դրսևորումների վրա:

#### Եզրակացություն

Գարիկ Գազիկի Հովակիմյանի «Պատերազմի մասնակից զինձառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական դրսևորումները հետպատերազմյան շրջանում» վերտառությամբ ատենախոսությունը ավարտուն աշխատանք է, ունի տեսական և գործնական նշանակություն, հետազոտության արդյունքները հավաստի են, հրատարակված աշխատանքները արտացոլում են ատենախոսության բովանդակությունը: Այն համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջներին և ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» թվանիշին:

Պաշտոնական ընդդիմախոս

Հոգեբանական գիտությունների

թեկնածու, դոցենտ




Ջ. Դ. Ասատրյան

Հոգեբանական գիտությունների

թեկնածու, դոցենտ Ջ. Դ. Ասատրյանի ստորագրությունը

հաստատում եմ ՀՊՄՀ գիտաբարոյաբան



Ս. Իսպիրյան

